

ՎԱԶԱԳԱՆ ԱԻԱԳԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՒ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ՝

Ի՞նչ է մահը արդարին, կա՛րն գիշեր մ՞ ուր
Կը լուծուի խոր երկունք մը նոր արեւուն:
Եղիշէ Դուրեան

Արշակ Զօպանեանը (1872–1954) Եղիշէ Դուրեան Սրբազանի (1860–1930) նկատմամբ ունեցել է մեծագույն յարգանք, խորին ակնածանք ու սէր, Գերապայծառը շատ յաճախ նրա կողմից գնահատուել է իբրեւ լայն ու բազմակողմանի հմտութիւններով օժտուած ազգային գործչի համեմատելի բարձրագույն կերպար, որի անձն ու ապրած կեանքը ներկայացնում են մի իսկական բարոյական գեղեցկութիւն, արտացոլում հոգու ու մտքի այն վեհ յատկանիշները, որ երբեւէ ունեցել է հայ ժողովուրդը: Զօպանեանի համոզմամբ՝ Եղիշէ Սրբազանը այն բացառիկ դէմքերից է եղել մեզանում, որին՝ «իբրեւ մեր պատմութեան ամենէն սիրելի ու յարգելի հայ մարդոցմէ մին», բովանդակ հայ ժողովուրդը ընկալել եւ գնահատել է դեռ ողջութեան օրոք²:

Երբ են նրանք ուղղակիօրէն ծանօթացել՝ յստակ դժուար է ասել: Սակայն յայտնի է, որ 1891 թ. ձեռնարկելով Պետրոս Դուրեանի կեանքին ու գործին նուիրուած ուսումնասիրութիւնը, Զօպանեանը վաղամեռիկ բանաստեղծի կենսագրութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու եւ տեղեկութիւններ քաղելու համար նամակով հարցումների մի ամբողջ ցուցակ է ուղարկել Եղիշէ Դուրեանին³, որն այդ ժամանակ որպէս վարդապետ

¹* Ստացուել է՝ 6.06.2024, գրախօսուել է՝ 7.07.2024: Էլ. հասցէ՝ avagyan.vachik@yandex.com:

² Տէս Ա. Զօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, թիւ 1, էջ 100:

³ Տէս Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը: Տեքստը պատրաստեց Գ. Ազնաւուրեանը: Խմբագրեց, վերջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Ա. Շարուրեանը, Երեւան, 1967, էջ 218: Նաեւ՝ Ա. Շարուրեան, Նիւթեր Պետրոս Դուրեանի կեանքի եւ ստեղծագործութեան վերաբերեալ, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1967, № 1, էջ 164, Պ. Գոմիւրեան, Երկերի ժողովածու երկու հատորով, հտ. 1: Տեքստը պատրաստեց եւ ծանօթագրեց Ա. Շարուրեանը: Խմբագրութեամբ՝ Պ. Սեւակի, Երեւան, 1971, էջ 217, Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում (ժողովածու):

ծառայում էր Արմաշի դպրեվանքում իբրեւ փոխտեսուչ⁴։ Ե. Դուրեանը Ա. Զօպանեանի հարցումներին հանգամանալի պատասխաններ է տուել 1891 թ. օգոստոսի 30-ին գրած նամակով⁵, որից, ինչպէս եւ հետագայ նամակներից ստացած նիւթը Զօպանեանը օգտագործել է իր ուսումնասիրութեան մէջ⁶։ Զօպանեանի խնդրանքով Ե. Դուրեանը նրան է ուղարկել նաեւ եղբար տաղերի հեղինակային սրբագրումները, որոնք, սակայն, չեն գոհացրել գրականագէտին, եւ նա իր դասընկեր, Արմաշի դպրեվանքի մաթեմատիկայի եւ գծագրութեան ուսուցիչ Մաքսուդ Միհրդատեանցից խնդրել է նշել ինչպէս բանաստեղծ Սիմոն Ֆելեկեանի աղաւաղումները⁷, այնպէս էլ Պետրոս Դուրեանի կատարած փոփոխութիւնները⁸։

Հետագայում յայտնի է, որ Զօպանեանը իր ձեռնարկած ուսումնասիրութեան առաջին գլուխը՝ վերնագրուած «Կենսագրութիւն», ձեռագիր վիճակով 1892 թ. ուղարկել է Ե. Դուրեանին, որն էլ նոյն տարուայ դեկտեմբերի 25-ի նամակում⁹՝ հասցէագրուած Զօպանեանին, արել է մի շարք դիտողութիւններ, ինչպէս ծանօթագրում է գրականագէտ Ալբերտ Շարուրեանը¹⁰։

1893 թ. աշնան վերջերին Զօպանեանը, Փարիզից վերադառնալով Պոլիս, Դուրեանին նուիրուած աշխատութեան ձեռագիրը տանում է իր հետ, շարադրանքին տալիս վերջնական տեսք եւ ուղարկում Թիֆլիս՝ Հրատարակչական ընկերութեան վարչութիւն՝ խնդրելով այն հրատարակել¹¹։ Ուսումնասիրութեան սկզբում դրուած էր հետեւեալ ընծայական ձօնը.

Կազմեց, բնագրերը պատրաստեց եւ ծանօթագրեց Ալբերտ Շարուրեանը, Երեւան, 2021, էջ 115։

⁴ Տէս Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 3։

⁵ Այդ նամակի ինքնագիրը տես ԳԱԹ, Ա. Զօպանեանի ֆօնդ, թիւ 1736։ Տէս նաեւ՝ Ա. ՇԱՐՈՒՐԵԱՆ, Նիւթեր Պետրոս Դուրեանի կեանքի եւ ստեղծագործութեան վերաբերեալ, էջ 164–170, Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 46–54։

⁶ Տէս Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 3–4։

⁷ Ս. Ֆելեկեանի աղաւաղումների մասին տես Ա. Զօպանեան, Արփիարեան էսթետիկոս, «Անահիտ», Փարիզ, 1907, մարտ–ապրիլ–մայիս, թիւ 3–4–5, էջ 67, Ա. Զօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս–դեկտեմբեր, թիւ 2, էջ 59, Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 4, 223, Ա. ՇԱՐՈՒՐԵԱՆ, Պետրոս Դուրեան. Կեանքը եւ գործը, Երեւան, 1972, էջ 234։

⁸ Տէս Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 120։

⁹ Անդ, էջ 74–76։

¹⁰ Տէս Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 218։

¹¹ Անդ, էջ 5–6։

«Առ արժանապատիւ
Եղիշէ Վարդապետ Դուրեան

Ձեր անունին, զոր կրկնապէս սիրելի դարձուցիք Ձեր հմտալից ու գեղեցիկ աշխատութիւններով, կ'ծօնեմ այս գիրքը, որ խանդավառ պաշտումի երգ մըն է մեր անմահ բանաստեղծի յիշատակին ուղղուած:

Փարիզ, փետր. 1894»¹²:

Մինչեւ գրքի լոյսընծայումը Չօպանեանից ստացած նամակից իմանալով գրքի հրատարակման մասին՝ Ե. Դուրեանը պատասխան նամակով՝ գրուած Արմաշից 1894 թ. մարտի վերջերին, իր յարգանքի եւ երախտագիտութեան բոլորանուէր խոր զգացումներն է փոխանցում գրականագէտին՝ «պատուական» այդ ձեռնարկութեան համար:

Նամակում ակնյայտ է զգացական տարրը, եւ յաճախ Ե. Դուրեանի խօսքը Չօպանեանի նկատմամբ ստանում է քնարական երանգներ, որտեղ երեւում են նաեւ մտերիմին իր ապրումները, մտորումները փոխանցելու անմիջականութիւնը. «Քու գրչիդ եւ հանճարիդ իրաւունքն էր ուսումնասիրել պատանի բանաստեղծի կեանքն ու տաղանդը. գերազանցապէս կարող ես դու իմանալ զինքն եւ որչափ հնար էր օգտուիլ՝ կենսագրականի մասին՝ քերթողին անշուք եւ վաղանցուկ կեանքին կցկտուր պատահարներէն եւ փախստեայ նշմարներէն. դու անոնցմով յաջողած ես կենդանի եւ սրտայոյզ նկար մը յօրինել պարզ եւ անբռնազբօս. իսկ ինչ որ ամէնէն աւելի պիտի խօսեր քեզ հետ, այն հոգին էր բանաստեղծին, տենչանքին մէջ միամիտ, պատրանքին մէջ յուսահատ, գեղեցկին առջեւ քնար, ճակատագրին դէմ ամպրոպ: Քաղցր է ինձ հաւատալ, թէ Դուրեան արտասուախառն ժպտով մը պիտի ողջունէ զքեզ՝ արբեցած այն անմահութեամբ, ում կցանկար յաւէտ եւ իւր վրայ ծանրացող պաղ քարի յիշատակարանէն՝ որ յաւիտենական տխուր հակասութիւնն է իւր կրակոտ կուրծքին՝ հեռանալով յաճախ՝ պիտի գայ թրթռացնել քու թերթերուդ մէջ իւր հոգին «որ թիթեռնի մ' ունէր թեւեր»¹³:

Նամակն աւարտւում է այն անմնացորդ հաւատով, որ նրանք, ովքեր

¹² Անդ, էջ 218–219: Նաեւ՝ Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 121:

¹³ Ա. Չօպանեան, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 219: Նաեւ՝ Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 77–78:

Պետրոս Դուրեան բանաստեղծին չեն ճանաչել, կարդալով Զօպանեանի գիրքը՝ նրան այնտեղ կգտնեն¹⁴:

Այստեղ հարեւանցիօրէն նկատենք, որ եթէ Ե. Դուրեանը Զօպանեանին ուղղուած առաջին նամակներում իր ողջոյնի խօսքը սկսում է «Մեծարգոյ պ. Արշակ Զօպանեան», «Մեծապատիւ սիրելի» դիմելաձեւերով, ապա վերջին նամակը սկսում է «Սիրելիդ իմ պ. Արշակ Զօպանեան» յղումով եւ աւարտում «Ընդունեցէք սիրոյս մեծարանքները» վերջընթեր արտայայտութեամբ¹⁵, որ անկասկած ասուած է սրտանց՝ առանց որեւէ ձեւականութեան:

Առաջին նամակների փոխանակումից յետոյ Ա. Զօպանեանի եւ Ե. Դուրեանի առնչութիւնների վերաբերեալ ժամանակագրական հաջորդ փաստը այն է, որ Զօպանեանը Կ. Պոլսի «Ծաղիկ» կիսամեայ ազգային, գրական եւ քաղաքական հանդէսը խմբագրելիս (1895 թուականի մարտից մինչեւ նոյեմբեր.— Վ. Ա.), երբ խնդրել է իր գաւառացի ընթերցողներին Հմայեակ Նարեանի պատմած եւ պարբերականում տպագրուած հինաւորաց «Յարալէզ» աւանդութեան կապակցութեամբ՝ թէ մարդագոհ գոյութիւն ունեցել է մեր նախկին կրօնի մէջ գիտական վիճաբանութեան վերաբերեալ հաղորդել ծանօթութիւններ եւ տալ իրենց կարծիքը այդ կարեւոր խնդրի մասին¹⁶, հակիրճ գրութեամբ պատասխանել է նաեւ Եղիշէ Դուրեանը՝ փոխանցելով իր դատողութիւնները¹⁷, որտեղ նա մերժում է արալէզներին վերագրուած յատկութիւնները, տալիս այդ բառի ստուգաբանութիւնը եւ ջանում արալէզների զուգակշիռները գտնել օտար դիցաբանութիւնների մէջ¹⁸:

Իսկ մարդագոհի կապակցութեամբ Եղիշէ վարդապետ Դուրեանի կարծիքը, ուշագրաւ է, Զօպանեանը տպագրել է բաւականին ուշ՝ միայն 1947 թ., վերահրատարակուած «Անահիտում»: Յօդուածին կցուած ծա-

¹⁴ Տէս Ա. ԶՕՊԱՆԵԱՆ, Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը, էջ 220: Նաեւ՝ Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 78:

¹⁵ Տէս Պետրոս Դուրեանը վաւերագրերում եւ ժամանակակիցների յիշողութիւններում, էջ 46, 71, 77, 78:

¹⁶ Տէս Հ. ՆԱՐԵԱՆ, Յարալէզ. Աւանդութիւն Հայոց հեթանոսական շրջանէն, «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, թիւ 15, էջ 553–556:

¹⁷ Տէս Ե. ԴՈՒՐԵԱՆ, Յարալէզ եւ Մարդագոհ, «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, թիւ 17, էջ 601–603:

¹⁸ Այդ մասին տէս Հ. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ, Երկրորդական կարգի աստուածներ եւ ոգիներ Եզնիկի քով (շարունակելի), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1932, յուլիս–սեպտեմբեր, թիւ 7–9, էջ 491:

նօթագրութիւնից պարզուում է, որ Դուրեանը 1895 թ. հոկտեմբերի 27-ով թուագրուած նամակով իր «մեծանուն բարեկամին» Արմաշից ուղարկել է հարցի կապակցութեամբ խոստացած կարծիքը՝ յուսալով, որ այն կհիւրընկալուի «Ծաղիկում»։ Սակայն, ինչպէս պարզուում է, Զօպանեանի՝ ազգային դատի քարոզին նուիրուելու նպատակով Պոլիսից Փարիզ հեռանալը (1895)¹⁹ անհնար է դարձրել ինչպէս այս, այնպէս էլ վարդապետի մի շարք ուրիշ գրուածքներ «Ծաղիկում» հրատարակելը²⁰։

Իսկ ինչ վերաբերում է Դուրեան վարդապետի յօդուածին, ապա նա նախ վկայաբերում է տարբեր ժողովուրդների՝ մարդագոհի կամ մարդակերութեան՝ իբրեւ կրօնական ծէսի մասին տեղեկութիւններ, ապա օտար եւ տեղական աղբիւրներից մեր անցեալ պատմական կեանքից նոյն երեւոյթի վերաբերեալ քաղած յիշողութիւնների շնորհիւ կարծում, որ մեզանում էլ հնում գոյութիւն ունեցել է այդ սոսկալի արարողութիւնը²¹։

1895 թ. յետոյ Ե. Դուրեանի կապակցութեամբ Զօպանեանի յաջորդ անդրադարձը վերաբերում է արդէն «Անահիտ» առաջին շրջանին (1898–1911 թթ.), երբ տեղեկացնելով մեծանուն եկեղեցականի «Հովուական սրինգ» տիտղոսով քերթուածների հատորի լոյսընծայման մասին, խոստանում է այդ «այդ սքանչելի գրքին վրայ» խօսել առանձին յօդուածով, իսկ այժմ բաւարարում է սոսկ հատորի՝ իր որակմամբ հայ բանաստեղծութեան ամէնից հոյակապ էջերից մէկի՝ «Եմմաուսի ճամբորդները» բանաստեղծութեան արտատպմամբ՝ վկայելով, որ գրքի վաճառման հասոյթը պէտք է յատկացուի հայ սովեալներին²²։

Թէ հետագայում ինչու Զօպանեանը չի անդրադարձել «Եմմաուսի ճամբորդները» ժողովածուին, դժուար է ասել։ Սակայն յայտնի է, որ 1908 թ. սեպտեմբերին՝ համիդեան վարչակարգի եւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումից յետոյ, երբ, ինչպէս Բաբկէն Ա. (Բաբկէն Կիւլեւէրեան) կիլիկեան աթոռակից կաթողիկոսի մահուան կապակ-

¹⁹ Տէս Ա. Զօպանեան, Դէմքեր. Արփիար Արփիարեան, Փարիզ, 1901, փետրուար, թիւ 2, էջ 40։

²⁰ Տէս Ե. ԴՈՒՐԵԱՆ, Մարդագոհ, «Անահիտ», Փարիզ, 1947, յուլիս–դեկտեմբեր, թիւ 2, 1947, էջ 16։

²¹ Տէս անդ, յուլիս–դեկտեմբեր, թիւ 2, 1947, էջ 15–16։

²² Տէս Ե. ԴՈՒՐԵԱՆ, Եմմաուսի ճամբորդները, «Անահիտ», Փարիզ, 1909, ապրիլ–մայիս, թիւ 1–2, էջ 39–40։

ցութեամբ յիշում է Չօպանեանը, ինքը մեկնում է Պոլիս եւ ծննդավայրում մնում 5–6 շաբաթ, Բաբկէն Ա-ի հետ (այն ժամանակ վարդապետ.— Վ. Ա.) հիւրընկալում է Դուրեան Սրբազանին, երբ վերջինս դեռ վարդապետ էր եւ ապրում էր Կ. Պոլսի Գատըգեւղ (Գատըքէօ.— Վ. Ա.) թաղամասում: Բաբկէն վարդապետը, կարեւորելով Չօպանեանի արժանիքները, բարեկամաբար յորդորում է նրան որպէս պատգամաւոր իր թեկնածութիւնը առաջադրել առաջիկայ կաթողիկոսական ընտրութեանը: «Փափաքը չէ որ կը պակսի ինծի, պատասխանեցի Բաբկէն վարդապետին,— յիշում է Չօպանեանը.— բայց ինծի չ'իյնար զիս առաջ քշել. եթէ այլք զիս յարմար դատեն այսպիսի կարեւոր գործի մը, ես չեմ որ պիտի խուսափիմ այդպիսի պարտականութեան մը կատարումէն»²³: Այդ ժամանակ Ե. Դուրեանը, որ, ինչպէս Չօպանեանն է գրում, «ինծի համար եղբայրական բարեկամութիւն մը ունէր վաղուց», եւս առաջարկում է նոյնը՝ զարմանալով, թէ ինքը ինչու նախապէս չի մտածել այդ մասին: Յաջորդ օրը Ե. Դուրեանի առաջարկութեամբ Չօպանեանը այցելում է Պոլսի Պատրիարքարան, որտեղ պարզւում է, որ նա Դուրեանի նախաձեռնութեամբ արդեն առաջարկուել է Շապին Քարահիսարի թեմի պատգամաւոր: «Քանի մը օր յետոյ երբ նորէն գացի Պատրիարքարան, պատասխանը եկած էր արդէն. Անդրանիկի ծննդավայրին քաջարի Հայութիւնը ինծի մեծ պատին ըրած էր ամենաջերմ ընդունելութիւն մ'ընելու Դուրեան սրբազանին առաջարկին»²⁴,— գրում է Չօպանեանը²⁵:

Աւելի ուշ, ինչպէս դարձեալ Բաբկէն կաթողիկոսի մահուան կապակցութեամբ յիշում է Չօպանեանը, արդեն 1919 թ.՝ Առաջին աշխարհամարտից յետոյ (28. յուլիս. 1914 թ. — 11. նոյեմբեր. 1918 թ. — Վ. Ա.), ինքն ու Սրբազանը հանդիպել են 1919 թ. փետրուարին Փարիզում՝ Նուբար Փաշայի նախաձեռնութեամբ հրաւիրուած ազգային համագումարում՝ «համազգային կարեւորութեան խնդիրներ քննարկելու» եւ «մշակելու համար հայ

²³ Ա. Չօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ–յունիս, թիւ 3–4, էջ 100:

²⁴ Անդ:

²⁵ Ա. Չօպանեանի՝ առաջին անգամ Արեւելեան Հայաստան կատարած ուղեւորութեան եւ կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելու մասին (կաթողիկոս ընտրուեց Մատթէոս Իզմիրեանը.— Վ. Ա.) մանրամասնւրէն տես Վ. Ա. ԽԱԳԵԱՆ, Արշակ Չօպանեանի կովկասեան կենսապատումը եւ մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութիւններին, «Էջմիածին», Ս. էջմիածին, 2022, № 7, էջ 68–73:

ազգի պահանջներուն ծրագիրը»²⁶։ Համագումարի աւարտից յետո պատուիրակները դիմում եմ Սրբազանին՝ հայկական եկեղեցում հոգեհանգստեան պատարագ մատուցելու հայազգի եւ յոյն զոհերի յիշատակին։ Եւ քանի որ պատուիրակութիւնը մտադիր էր պատարագին հրաւիրելու յոյն պետական եւ քաղաքական գործիչ է. Վենիզելոսին, Փարիզում գտնուող բոլոր յոյն նախարարներին, Յունաստանի դեսպանին եւ այլ յոյն պաշտօնական անձանց ու մամուլի ներկայացուցիչներին, Չօպանեանը Սրբազանին խնդրում է ասելիք քարոզի շարադրանքը տալ իրեն՝ Ֆրանսերէն թարգմանելու, եւ այդ օրը քարոզ մատուցել Ֆրանսերէնով, քանի որ հայերէնով անհասկանալի կմնար հիւրերի համար եւ կարող էր ձանձրացնել։ Դուրեան Սրբազանը չի համաձայնում՝ հաւատարիմ մնալով աւանդասէր հայ կրօնաւորի ըմբռնումներին. «Հայ եկեղեցիի բեմէն տրուած քարոզը գրաւոր չի կրնար ըլլալ, ըսաւ. իսկ Ֆրանսերէն գրուած քարոզ մը կարգալ, բոլորովին անյարմար է. քարոզը եւ պատարագը իրենց վեհութիւնը կը կորսնցնեն։ Ես հայերէն կ'արտասանեմ քարոզս եւ երբեմն յունարէն բառեր կը խառնեմ հայերէնին...»²⁷։

Չօպանեանի վկայութեամբ գրեթէ մեկ ժամ տեւած քարոզը՝ չնայած իր մէջ առած 8–10 յունարէն բառերի, շուրջ երեսուն յոյն հիւրերի համար լինում է ձանձրալի։ Հաշուի առնելով այս հանգամանքը՝ Չօպանեանը կարծում է, որ Ե. Դուրեան Սրբազանը թեեւ մեծ մտաւորական էր, հոյակապ ուսուցիչ, հմուտ բանասէր, վեհաշունչ բանաստեղծ ու խորամիտ քարոզիչ, սակայն նրա մէջ բացակայում էր գործնական ոգին, տրամաբանական ճկունութիւնը²⁸։

Դուրեան Ե. Դուրեանի մէջ, իհարկէ, ըստ Չօպանեանի, այս յատկութիւնների պակասն է եղել նաեւ պատճառը, որ 1911 թ.՝ Մատթէոս Իգմիրլեան հայրապետի վախճանից յետոյ, երբ կաթողիկոսական ընտրութիւններին առաջադրուած թեկնածուների շարքում ներկայացուած էր նաեւ Եղիշէ Դուրեանը²⁹, Չօպանեանը իր քուէն որոշել է տալ ոչ թէ նրան,

²⁶ Տէս Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ազգային մեծ գործիչը եւ բարերարը. Պօղոս Նուբար փաշա, «Պատմաբանասիրական հանդէս», 2022, № 1, էջ 18–19։

²⁷ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, ապրիլ–յունիս, թիւ 3–4, էջ 102։

²⁸ Անդ։

²⁹ Միւս թեկնածուներն էին Մաղաքիա Օրմանեան, Սուքիաս, Գեւորգ Սուրէնեան եպիսկոպոսները. տես Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1911, մայիս–յունիս, թիւ 5–6, էջ 136, նաեւ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1939, յունուար–փետրուար–մարտ, թիւ 1–2, էջ 58։

այլ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին՝ պատճառաբանելով. «Դուրեան արքեպիսկոպոսը հայ եկեղեցականութեան ամենէն նուրբ, ամենէն արուեստագէտ եւ իմաստասէր ուղեղն է, բայց իր պատրիարքութեան վերջին փուլին մէջ ցոյց տուաւ որ չունի այն կորովը, վճռականութիւնը եւ ճշդատեսութիւնը որ անհրաժեշտ են պատրիարքի մը կամ հայրապետի մը մօտ. լաւագոյն է՝ իրեն ինչպէս եւ ազգին համար՝ որ «Հովուական Սրինգ»ին հոյակապ բանաստեղծը շարունակէ ըլլալ թրքահայ արդի գրական մտաւորականութեան պատրիարք»³⁰:

Վշտացրել է արդեօք Զօպանեանի անձնական անկաշկանդ գնահատականը Եղիշէ Դուրեանին, մանաւանդ եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ ընտրութիւնից յետոյ միայն մէկ-երկու քուէի առաւելութեամբ Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրուում Գեւորգ Սուրէնեանը (1911–1930 թթ.), կարելի է միայն գուշակութիւններ անել: Սակայն Զօպանեանի՝ Ե. Դուրեանին տուած գնահատականի մէջ երեւում է ազնիւ եւ ազգանուէր մտաւորականը, որը, մտահոգ հայ եկեղեցու բարեկարգութեամբ եւ հոգսերով, չի վարանել արտայայտել իր անաշու կարծիքը:

Եթէ մի պահ խիստ պայմանականօրէն ենթադրենք, թէ Ա. Զօպանեանի վերաբերմունքը խռովել է Ե. Դուրեանին, ապա 1912 թ. Կ. Պոլսի «Շանթ» կիսամեայ գրական-գեղարուեստական հանդէսում նրա տպագրած ակնարկը Ա. Զօպանեանի 40-ամեայ տարեդարձի կապակցութեամբ ցոյց է տալիս ազնիւ եւ վեհանձն կրօնաւորի լայնահոգութիւնը, հարազատի նկատմամբ անյիշաչարութիւնը:

«Շանթի» այդ թիւը ամբողջութեամբ նուիրուած է Զօպանեանին³¹, եւ մեկնարկում է հենց Ե. Դուրեանի խօսքով, որում նկատելի է ջերմ ու գորովալից վերաբերմունքը, որը, պէտք է ասել, երբեմն դառնում է շռայլ ու յախուռն:

³⁰ Ա. ԶՕՊԱՆԵԱՆ, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1911, մայիս–յունիս, թիւ 5–6, էջ 136:

³¹ Համարում արտատպուած են Ա. Զօպանեանի բազմաթիւ եւ հետաքրքիր լուսանկարներ՝ սկսած մանկութիւնից մինչեւ 1912 թ.: Արտատպուած են նաեւ Զօպանեանի՝ Յակոբ Գիրջեանի հեղինակած կիսանդրին (1911. մայիս), ինչպէս նաեւ յոբելեարի ստուերանկարը: Բացի Ե. Դուրեանից՝ Ա. Զօպանեանին եւ նրա բազմաբեղուն վաստակը հանդէսի խմբագրապետի՝ Մերուժան Պարսասեանի խնդրանք-կոչով գնահատել են Ս. Երեմեանը, Գ. Լեւոնեանը, Յ. Քիւֆէճեանը, Վրթ. Փափագեանը, Օ. Զիֆթէ-Սարաֆը, Ֆրանսիացի բանաստեղծ Պրեռ Քիլառը (թարգմանիչ՝ Աստղիկ) եւ այլք: Իսկ Թէոդիկը հակիրճ շարադրել է Ա. Զօպանեանի կենսագրութիւնը. տես «Շանթ», Կ. Պոլիս, 1912, յուլիս, թիւ 25:

Ե. Դուրեանը բարձր է գնահատում Չօպանեանի՝ արդեն շուրջ քառորդ դար ընթացող հրապարակագրական, գրական բեղուն գործունեությունը՝ առանձնացնելով մասնաւորապէս ֆրանսերէնով ուսումնասիրութիւններն ու գեղարուեստական թարգմանութիւնները, որոնցով նրան յաջողուել է օտար, բայց «զգայուն» հոգիներին ծանօթացնել «իր ցեղին յուսահատ ցաւերն իրենց խռովիչ մարմրութներովը, եւ սրտահառաչ երգերն՝ իրենց ընդոստուցիչ եւ յուզիչ շեշտումներովը...»³²:

Ե. Դուրեանը բացարձակ կարեւորութիւն է տալիս Չօպանեանի՝ հեռաւոր ու մօտիկ անցեալի խորքից (ԺԴ.–ԺԸ.) միջնադարեան մեր տաղերգուներից շատերի յայտնաբերմանը, որի շնորհիւ նրանք «իրենց սիրովն ու սազովը» վերապրում առանձնապէս ժողովրդին փոխանցելով սեփական ցեղի գիտակցութեան ձայնը: Գերազանցապէս զարգացնելով Գ. Ախվերդեանի կէս դար առաջ սկսած գործը՝ Չօպանեանը, ինչպէս գրում է Սրբազանը, մեզ ծանօթացրեց ու սիրել տուեց Նահապետ Քուչակին, Նաղաշ Յովնաթանին եւ էլի ուրիշների: Դուրեանը սքանչացած է նաեւ Չօպանեանի ստեղծագործական ոճով, որ միայն իրենն է. «...իր աշխարհաբարը կուռ՝ յստակ ու պատկերաւոր լեզուի մը նկարչութեամբ կը հրապուրէ զմեզ, ու ո՛չ միայն իր արձակին՝ այլ եւ իր քերթուածներուն մէջ կը տեսնենք միեւնոյն կորովն ու բնականութիւնը, ուր իմաստի ամեն խորութիւն կը պայծառանայ՝ առանց խրթնութեան: Ու օր մը՝ երբ վարպետն իր Մայրենի լեզուին հրաշալի ներբողականն հիւսելու ներշնչումն ունեցաւ, բոլոր ուժովը փառաբանելու համար անոր վաղնջական բղխումն ու ծաւալումը գետի մը մեծվայելութեամբն ու հայելիի մը հանդարտութեամբը, չէ՞ք կարծեր որ՝ անխուսափելի ենթակայացումով մը՝ իր իսկ աշխարհաբարը պանծածուցած ըլլայ՝ իր նորագոյն ձեւին տակ: Զարմանալի չէ անշուշտ որ հանճարի մարդն իր պաշտածը սրբագործէ իր իսկ հալոցէն դուրս բերելով զայն, շողարձակ ու մաքուր»³³:

³² Ե. ԴԻՐԵԱՆ. Ա. ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ, Արշակ Չօպանեան, «Շանթ», Կ. Պոլիս, 1912, յուլիս, թիւ 25, էջ 2:

³³ Անդ: Գրեթէ նոյն միտքը տես նաեւ Գ. ՖԵՏԻՍԵԱՆ, Երեք բանաստեղծ, «Մասիս», Կ. Պոլիս, 1892, թիւ 3965, էջ 163, Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆ, Արշակ Չօպանեան, Երեւան, 1987, էջ 51, ՅՈՒ. ԱՎԵՏԻՍԵԱՆ, Արշակ Չօպանեանի բանաստեղծութեան լեզուն, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1991, № 3, էջ 73–75:

Ի դէպ՝ այս քաղուածքը գրեթէ նոյնութեամբ մէջ է բերել Բէյրութի «Զարթօնք» օրաթերթը Ա. Չօպանեանի մահուան քառասունքի առիթով. տես Կարծիքներ Չօպանեանի գրականութեան մասին, «Զարթօնք» 1954, 25 յուլիս, էջ 4:

Այստեղ անցողակի նկատենք, որ տարիներ անց կարեւորելով Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի, նրա գրական խմբի (Արփիարեան Ա., Բաշալեան Լ., Շահնազար Հ., Կամսարական Տ., Զոհրապ Գ., Զօպանեան Ա. եւ ուրիշներ- Վ. Ա.) դերը արեւմտահայ աշխարհաբարի վերջնական յաղթանակի մէջ՝ Զօպանեանը փաստում է, որ «գրաբարեան» Եղիշէ Դուրեան Սրբազանն էլ «իր արձակ ու տաղաչափեալ գրութիւնները անստգիւտ աշխարհաբարով մը շարագրեց այլ եւս»³⁴։

Իր յօդուածի շարունակութեան մէջ Ե. Դուրեանը չի շրջանցում Զօպանեանի նաեւ գրական-քննադատական գեղեցիկ փորձերը, որոնք, Սրբազանի իրաւացի համոզմամբ, «պիտի կազմեն միշտ գոհար զարդը մեր նոր գրականութեան»³⁵։

Ե. Դուրեանը գնահատում է նաեւ Զօպանեանից օրինակ ստացած նորատիպ «Հայ էջեր» (1912) ուսումնասիրութիւնը³⁶։ «Անցողակի», ինչպէս ինքն է գրում, ներկայացնելով գրքի բովանդակութիւնն ու կառուցուածքը, քաղուածքներ մէջբերելով հեղինակի ներածութիւնից՝ Սրբազանը ամփոփ՝ միայն գրական տեսակէտից, անում է մի շարք դիտարկումներ, հակիրճ վերլուծում է հայ միջնադարեան քնարերգութեան կրօնական եւ աշխարհիկ մի շարք տարրեր, արժեւորում հատորում տեղ գտած մի քանի տաղեր՝ չխաքցնելով իր զմայլանքն ու հաճելի ապշեցումը դրանցով։ Մեզ համար, սակայն, այստեղ առաւել կարեւորը դարձեալ այն է, որ Ե. Դուրեանը անմնացորդ բարձր է գնահատում Զօպանեանի՝ հայ արուեստի եւ բանաստեղծութեան անծանօթ մնացած էջերը երեւան հանելու բանասիրական որոնումները եւ դրանք հանրութեանը ներկայացնելու անխոնջ ջանքերը, որ որքան գիտական-բանասիրական էին, նոյնքան էլ հետապնդում էին քաղաքական նպատակներ՝ նպաստելով ազգային ինքնաճանաչմանը³⁷։

Մինչեւ «Անահիտ» հանդէսի վերահրատարակումը՝ 1829 թ. մայիս, Ե. Դուրեանի եւ Ա. Զօպանեանի յարաբերութիւնների վերաբերեալ հիմնականում տեղեկութիւններ ենք առնում Դուրեանի՝ Զօպանեանին ուղղուած

³⁴ Ա. Զօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1934, յունուար-յունիս, թիւ 5-6, էջ 100։

³⁵ Եղիշէ Ա. Եղս. ԴՈՒՐԵԱՆ, Արշակ Զօպանեան, «Շանթ», Կ. Պոլիս, 1912, յուլիս, թիւ 25, էջ 2։

³⁶ Այդ աշխատութեան մասին տե՛ս Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆ, Արշակ Զօպանեան, Երեւան, 1987, էջ 338-340։

³⁷ Տե՛ս անդ, էջ 339։

նամակներից: Դուրեզ ազգային-քաղաքական-հասարակական յայտնի ծանր հանգամանքներն (Առաջին համաշխարհային պատերազմ, Եղեռն, գաղթ եւ այլն) են պատճառ դարձել նրանց միջեւ կապի առժամանակ թուլացման, յամենայնդէպս յաջորդ յայտնի նամակը՝ գրուած Ե. Դուրեանի կողմից Երուսաղէմից, թուագրուած է 1923 թ. մայիսի 9-ով: Նամակում Եղիշէ Պատրիարքը հաճոյքով տեղեկացնում է, որ ստացել են Ա. Զօպանեանի հեղինակած «La Roseraie d'Armenie» («Վարդենիք Հայաստանեաց».— Վ. Ա.) գիրքը³⁸: Բարձր գնահատելով «ազգօգուտ այդ երկասիրութիւնը», որ կոչուած էր հայ գրականութիւնը ծանօթացնել Եւրոպային, Սրբազանը գնահատում է իբրեւ «Հայ Ազգի Գրական ու Արուեստագիտական հոգւոյն փառաբանումը»: Նաեւ ֆրանսիական մամուլում ջերմ ընդունելութեան արժանացած այդ հատորը «որչափ մեր Գրականութեան, նոյնչափ ալ Ձեր հանճարին մատուցուած գեղեցկագոյն հարկը կը համարինք, եւ մեզ ու մեր տառապած Յեղը միսիթարուած կը գտնենք այդ մեծարանքով»³⁹,— նամակում գրում է Ե. Դուրեանը՝ իր հայրական օրհնութիւնը բերելով Զօպանեանին:

Յաջորդ նամակներում (13. յուլիս. 1923, Յ. օգոստոս. 1923) Պատրիարքը, համոզուած, որ Զօպանեանը հետաքրքրուած է Երուսաղէմի Ս. Աթոռի համար կենսական կարեւորութիւն ունեցող «Կարկուրեան ծանօթ դատի վիճակով»⁴⁰ եւ զբաղւում է Երուսաղէմի վանքի ճակատագրով, նրան ժամանակ առ ժամանակ մանրամասն տեղեկութիւններ է փոխանցել դատավարութեան ընթացքի վերաբերեալ⁴¹ ի վերջոյ աւետելով նպաստաւոր վճռի մասին⁴²:

³⁸ «La Roseraie d'Armenie»-ի երկրորդ հատորը վերամշակումից եւ լրացումներից յետոյ Ա. Զօպանեանը լոյս է ընծայել 1923 թ. (Ա. հատորը լոյս է տեսել 1918 թ., իսկ երրորդը՝ 1929 թ.— Վ. Ա.): Այն ձօնուած էր բռնակալութեանը զոհուած հայութեանը: Մեծածաւալ այդ գրքում (341 էջ) տեղ են գտել Ե.—ԺԶ. դարերի՝ հայ ժողովրդի գեղարուեստական հանճարի արգասիք դարձած արուեստի գործերի հարիւրաւոր լուսանկարչական վերարտադրութիւններ: Այն ընդգրկում է նաեւ բազմաթիւ հայ միջնադարեան նշանաւոր եւ անյայտ հեղինակների մի քանի տասնեակի հասնող բանաստեղծութիւնների՝ ֆրանսերէն լեզուով բարձրարուեստ թարգմանութիւններ, որ կատարել է Զօպանեանը: Գիրքը ունի նախաբան, որտեղ հեղինակը ընդհանուր գծերով բնութագրում է թէ՛ ժամանակաշրջանը եւ թէ՛ հեղինակներին, ցոյց տալիս հայ միջնադարեան բանաստեղծութեան զարգացման ուղին. տես՝ Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆ, Արշակ Զօպանեան, էջ 356—357:

³⁹ ԳԱԹ, Արշակ Զօպանեանի ֆոնդ, I բաժին, թ. 1756:


⁴⁰ Այդ մասին տես՝ ԹՈՐՈՒՄ ԱՐՔԵՊՍ., Եղիշէ Պատրիարք Դուրեան (իր քահանայութեան յօրեկեանին առթիւ), Երուսաղէմ, 1932, էջ 290—291:

⁴¹ Տես ԳԱԹ, Արշակ Զօպանեանի ֆոնդ, I բաժին, թ. 1758:

⁴² Տես ԳԱԹ, Արշակ Զօպանեանի ֆոնդ, I բաժին, թ. 1761:

Իսկ Ե. Դուրեանի՝ 1923 թ. օգոստոսի 3-ի նամակից կարելի է ենթադրել, որ Զօպանեանն է նաեւ դիմել նրան՝ Կոմիտաս Վարդապետին Երուսաղէմի հիւանդանոցներից մէկում տեղաւորելու եւ նրա բուժման խնամակալութիւնը հոգալու համար, ինչին Սրբազանը ցաւով պատասխանել է, թէ չեն կարող գոհացում տալ այդ խնդրանքին. «Որովհետեւ,– ինչպէս նամակում գրում է Ե. Դուրեանը,– նախ, հնարաւորութիւն չկայ բացարձակապէս, հիւանդը պահպանել եւ դարմանել Վանուցս Միաբանական կամ Ուխտաւորական շրջանակներու մէջ, ուր տրամադրելի բնակարան չէ մնացած բնաւ: Յայտնի է, թէ Վանքը խճողուած է ներկայիս հին եւ նոր գաղթականներով...»⁴³: Եւ առաջարկել է դժբախտ Վարդապետի բուժումը իրականացնել Եւրոպայում, որ նրա համոզմամբ կլինէր առաւել դիւրին:

Շարունակութիւնը՝ յաջորդիւ



⁴³ ԳԱԹ, Արշակ Զօպանեանի ֆոնդ, I բաժին, թ. 1758: